ՄԵԾԱՆՈՒՆ ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՎ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

(Ծննդյան 75-ամյակի առթիվ)

Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Արարատ Սահակի Ղարիբյանը ծնվել է 1899 թ. Արտաշատի շրջանի Այգեզարդ գյուղում։ Գյուղական

դպրոցից հետո խոստումնալից պատանին ուսումնառությունը շարունակում է Երևանի գիմնազիայում, որը և ավարտում է 1919 թ.։ Այնուհետև նա զբաղվում է ուսուցչությամբ։ Սակայն ուսումը շարունակելու տենչը հանգիստ չէր տալիս նրան։ 1923 թ. Ղարիբյանն ընդունվում է Երևանի պետական համալսարանը, որտեղ ունկնդրում է ժամանակի խոշորագույն հայագետներին, խորանում լեզվաբանության մեջ։ Համալսարանն ավարտելուց հետո նա սովորում է ասպիրանտուրայում, ղեկավար ունենալով մեծագույն լեզվաբան Հրաչյա Աճառյանին։

Հույժ աշխատասեր ու բանիմաց Ղարիբյանն, իր խանդավառ սերնդակիցների հետ միասին, հոգու ամբողջ նվիրումով, սկսած 30-ական թվականներից ձեռնամուխ եղավ նորաստեղծ Սովետական Հայաստանում կուլտուրական հեղափոխության իրականացման գործին. անգրագիտության վերացում, դպրոցական ցանցի վերակառուցում, մանկավարժական կադրերի պատրաստում, դասագրքերի, ծրագրի ու ձեռնարկների ստեղծում, բնագավառներ, որոնցում իր մասնակցությունն է ցուցաբերել մեծանուն գիտնականը։

Մեծ է Ա. Ղարիբյանի վաստակը մանկավարժական կադրեր պատրաստելու գործում։ Երկար տարիներ դասախոսական-մանկավարժական աշխատանք կատարելով մեր հանրապետության, Ադրբեջանի և Վրաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում, նա զգալիորեն նպաստել է հայոց լեզվի ուսուցիչների պատրաստման գործին։

Ակադեմիկոս Ա. Ղարիբյանը ժողովրդական գիտնական է դարձել դպրոցին նվիրվելու, դասագրքեր ու մեթոդական ձեռնարկներ ստեղծելու շնորհիվ։ Նրա գրչին են պատկանում մեկ տասնյակի հասնող հայոց ու ռուսաց լեզուների դասագրքերը, որոնց մեջ առանձնակի հաջողություն ունեցավ 5—6-րդ դասարանների բերականության դասագիրքը։ Նա ուսուցիչներին տվեց «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա», «Հայ մանկավարժական լեզվաբանության հարցեր» և այլ մեթոդական ձեռնարկներ։

Խոշոր է գիտնական Ա. Ղարիբյանի ներդրումը հայագիտության մեջ։ Հետաքրքիր է հիշատակել, որ Հայաստանում բանասիրության գծով առաջին թեկնածուական (1937 թ.) և դոկտորական (1940 թ.) գիտական աստիճաններ շնորհվել են Ա. Ղարիբյանին։ Թեկնածուական դիսերտացիան նվիրված էր «Հայերենի հոգնակի մասնիկները և նրանց լեզվաբանական արժեքը», իսկ դոկտորականը՝ «Հայ բարբառների մի նոր ճյուղ» թեմաների լուսաբանմանը։ Նրա գիտական նախասիրություններից մեկը գրական աշխարհաբարի պատմության և հայոց լեզվի պատմական քերականության ուսումնասիրությունն էր։ Այս պրոբլեմին հեղինակը նվիրել է բազմաթիվ աշխատություններ և հոդվածներ. «Հայերենի անվանական հոլովման զարգացման երկու օրենքները» (1955), «Հայերենի հոգնակի նշանակող մասնիկները և նրանց լեզվաբանական արժեքները» (1935), «Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն» (1937) և այլն։

Ա. Ս. Ղարիբյանը մի առանձին սիրով ու եռանդով է նվիրվել հայ բարբառագիտության։

ուսումնասիրությանը։ Հմտորեն առաջ տանելով իր քննությունները, նա հայտնաբերել է բազմաթիվ բարբառներ ու մի շարք բարբառային ճյուղեր, վեր է հանել բարբառների կառուցվածքային յուրահատկություններր, վերանայել ու կատարելության հասցրել նրանց դասակարգման սկզբունքը։

Հայ բարբառագիտության բնագավառում Ա. Ղարիբյանը Հ. Աճառյանից հետո լուծեց շատ կարևոր մի խնդիր. նա բարբառային փաստերը ծառայեցրեց հայոց լեզվի պատմության խրթին հարցերի լուսաբանմանը։

Փաստական հարուստ նյութի հիման վրա քարտեզագրելով բարբառների բաղաձայնական համակարգը և քննելով երևույթի բազմաձևության ու նրա առաջացման պատճառները, Ա. Ղարիբյանը հանգեց հայկական կոնսոնանտիզմի նոր մեկնաբանության գաղափարին, որը որպես հնդեվրոպական լեզուների կարևոր հատկանիշներից մեկը տևական քննության ենթարկեց միութենական «Вопросы языкознания» հանդեսում (1959—1961 թթ.), բանավեճին մասնակից դարձնելով միջազգային համարում ունեցող բազմաթիվ լեզվաբաններին։ Հայագիտական հարցի քննարկումը միջազգային մասշտաբով կարևոր երևույթ էր, հայագիտական մտքի զարգացման լավագույն օրինակ։

Ա. Ղարիբյանի՝ հայ բարբառագիտությանը նվիրված տասնյակ աշխատությունների գլխագործոցը «Հայ բարբառագիտություն» (1953) մեծածավալ աշխատությունն է, որը հարցերի ընդգրկմամբ մի յուրատիպ հանրագիտարան է։

Ա. Ղարիբյանի գիտահետազոտական աշխատանքն ընթացել է հայոց լեզվի պատմության, հայ բարբառագիտության, բառարանագիտության հարցերի լուսաբանման, ինչպես նաև դպրոցական ու բուհական դասագրքեր և հայոց լեզվի նոր մեթոդիկա ստեղծելու ուղղություններով։

Ա. Ղարիբյանը հայ բառարանագրության բնագավառում հանդես եկավ և՛ որպես կազմակերպիչ ու հեղինակ, և՛ թե հեղինակակից ու խմբագիր։ Նրա ղեկավարությամբ են կազմվել ռուս-հայերեն քառահատոր, հայ-ռուսերեն ռազմական, ուղղագրական և այլ բառարաններ։ Հատկապես բարձրարժեք է նրա ստվարածավալ ռուս-հայերեն բառարանը (1968), որն արժանացավ հանրապետության պետական մրցանակի։

Արգասավոր է Ա. Ղարիբյանի գիտա-կազմակերպչական աշխատանքը. նա երկար տարիներ ղեկավարել է Երևանի պետական համալսարանի, Խ. Աբովյանի անվան և հեռակա մանկավարժական ինստիտուտների հայոց և ռուսաց լեզուների ամբիոններր, միաժամանակ հանդիսանալով դրանց մի մասի հիմնադիրը։ Նա շուրջ 14 տարի ղեկավարել է ՀՍՍՀ դիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտը։ Այժմ Ա. Ղարիբյանը ՀՍՍՀ ԳԱ հիմնակազմ սրադարանի դիրեկտորն է։

Ա. Ղարիբյանը համարարբառ քարտարանի հիմնադիրն ու գիտական ղեկավարն է։ Այս քարտարանի շնորհիվ հրատարակչական ընթացքի մեջ գտնվող «ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան» նախատեսված չորս հատորից հասավ հինգի, դարձավ ավելի կատարյալ։ Ա. Ղարիբյանի ղեկավարությամբ սկսվեցին այդ բառարանի սկզբունքները և նրա գլխավոր խմբագրությամբ հրատարակվեց առաջին հատորը։

Այժմ գիտական օգտագործման մեջ են դրված Խորենացու և մյուս դասական հեղինակների համաբարբառները, որոնց հիման վրա պիտի ստեղծվի գրաբարի լիակատար բացատրական բառարան։ Սա մի ձեռնարկում է, որը նշանակալից ավանդ է հայագիտության մեջ և նպաստում է նրա հետագա զարգացմանը։

Մեծ և փառավոր ուղի է անցել մեծանուն գիտնականն ու հմուտ մանկավարժը, որն իր ամբողջ գիտակցական կյանքը նվիրաբերել է հայոց լեզվի ուսումնասիրմանը և սովետահայ լեզվաբանության զարգացմանը։ Ա. Ղարիբյանի բազմամյա գիտական բեղմնավոր աշխատանքը ըստ արժանվույն գնահատվել է կառավարության և ժողովրդի կողմից։ Նա արժանացել է գիտության վաստակավոր գործչի կոչման, պարգևատրվել Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, Խ. Աբովյանի մեդալով և բազմաթիվ գովասանագրերով ու պատվոգրերով։

Ուրախալի է, որ հարգելի պրոֆեսորն իր կյանքի ութերորդ տասնամյակի կեսերին ստեղծագործում է նույնպիսի եռանդով ու ավյունով, ինչպես շատ տարիներ առաջ։ Անսպառ եռանդի տեր, տքնաջան, ժամանակի պահանջներին համաքայլ ընթացող, իր դիտելիքները բանավոր ու գրավոր խոսքի միջոցով մասսաներին հասցնող յոթանասունհինգամյա Արարատ Ղարիբյանին ցանկանանք քաջառողջություն և արգասավոր գիտական գործունեություն։

Ռ. Հ. ԲԱՂՐԱՄՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր